ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2025 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ

Օրակարգում

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2025-2026 ուս.տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումները նոր ուսումնական տարում լաբո-ռատորիաների պատրաստվածության վերաբերյալ
3. Ընթացիկ հարցեր

Գիտխորհրդի նախագահ, դեկանի ժ/պ Ա.Ս.Գալստյան -Հարգելի գործընկերներ սկսենք մեր այս ուսումնական տարվա առաջին նիստը: Նիստին մասնակցում են 16 անդամները, բացակա չունենք:

Ըստ օրակարգի 1. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2025-2026 ուս.տարվա աշխատանքային ծրագրի քննարկում և հաստատում: Աշխատանքային օրակարգի նախնական տարբերակը ունեիք, խնդրում եմ ներկայացրեք ձեր առաջարկները, ավելացումները և փոփոխությունները:

Կ.Ռ.Գրիգորյան - Սեպտեմբեր

2. «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցոլոգիական հարցումների արդյունքների քննարկում (նախորդ տարվա 2-րդ կիսամյակի արդյունքներ): Այս տվյալների քննարկումը և վերլուծությունը կատարվում է մեթոդ խորհրդի նիստում, ինչը ես ներկայացնելու եմ հաշվետվության մեջ: Ինչ իմաստ կա քննարկել Սեպտեմբերի

Ա.Ս.Գալստյան- դուք ճիշտ եք, սեպտեմբերի նիստին մենք ուղղակի տեղեկություն ենք տալու այս հարցի մասին, լուրջ քննարկումները կներկայացնեք Դուք՝ Ձեր հաշվետվության մեջ:

ՈՒԽ նախագահ ակնկալում եմ Ձեր անմիջական աշխատանքները հարցման ընթացքում ուսանողների ակտիվ մասնակցության գործում, քանզի մեկ ուսանողի մասնակցությամբ իրական գնահատում չի կատարվում։

Գ.Ս.Գրիգորյան – ես մի քանի դիտարկումներ ունեմ՝

1. Հոկտեմբեր ամսվա օրակարգում՝ մեթոդխորհրդի նախագահի հաշվետվություն, այստեղ պետք է հստակեցում կատարվի՝ ավելացնել «նախորդ տարվա» բառակապակցությունը։

2. Ծրագրի ղեկավարների հաղորդումը՝ 1-ին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների մասին. առաջարկում եմ նոյեմբեր ամսվա օրակարգից տեղափոխել հոկտեմբերի օրակարգի մեջ։

3. Ամբիոնի վարիչի հաշվետվությունը ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ ապրիլ, մայիս ամիսների օրակարգից հանել։ Կարծում եմ ամբիոնի վարիչների հաշվետվության համար հարմար է հունիս ամսվա վերջին նիստը, որտեղ ամփոփ կներկայացվեն կատարված աշխատանքերը (հասրակական և գիտական), քննության արդյունքները, ծրագրերում իրականացված փոփոխությունները և ընդհանուր վիճակը դասախոսական կազմում։

Նիստի նախագահ Ա.Ս.Գալստյան- պրն. Գրիգորյան, Ձեր դիտարկումների վերաբերյալ. Առաջին կետի հետ հանմաձայն եմ՝ ավելացումը կկատարվի, 2-րդ դիտարկումը՝ ծրագրերի ղեկավարների հաղորդումը 1-ին կուրսեցիների հետ կատարվող աշխատանքների մասին՝ տեղափոխության չի ենթարկվի։ Նոյեմբերի օրակարգում է ներառվել քանզի այդ ժամանակահտվածում ունենում են ընդհանուր պատկերացում և՛ ուսանողի ադապտցիայի հետ՝ ուսանողի պարտականություններին, և՛ առաջին ընթացիկի արդյունքները։ 3-րդ կետի վերաբերյալ - այո, ամբիոնների վարիչների հաղորդումը ամբիոններում կատարված աշխատանքների վերաբերյալ կտեղավորվի հունիս ամսվա օրակարգ։ Այստեղ մեկ ավելացում. Հարգելի ամբիոնների վարիչներ Ձեր հաշվետվությունների համար կներկայացվի ձևաչափի նախնական տեսք, (իհարկե կքննարկվի և կկարգավորվի նիստում), ըստ որի

կներկայացվի հաշվտվությունը։ Հունիս ամսվա համար քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը կունենա 2 նիստ։

Ուսանող Է.Երիցյան - Աշխատանքային օրակարգում ներառված չէր ՈՒԳԸ-ի և ՈՒԽ-ի նախագահների հաղորդումը կատարած աշխատանքների վերաբերյալ

Նիստի քարտուղար Մ.Ա.Սամվելյան – Կանոնակարգի համաձայն ՈՒԳԸ-ի և ՈՒԽ-ի նախագահները հաղորդումը ներկայացնում են իրենց համապատասխան կազմակերպություններում։ Սակայն Դուք կարող եք ցանկացած նիստի ընթացիկ հարցեր բաժնում ներկայացնել Ձեր հաղորդումը՝ կատարած աշխատանքների վերաբերյալ։

Որոշեցին - հաստատել Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի 2025-2026 ուս.տարվա աշխատանքային օրակարգը՝ կատարված փոփոխություններով։

ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2025-26 ուսումնական տարվա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳ

Օգոստոս

4. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2025-2026 ուս.տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:
5. Ամբիոնների վարիչների հաղորդումները նոր ուսումնական տարում լաբո-ռատորիաների պատրաստվածության վերաբերյալ
6. Ընթացիկ հարցեր

Սեպտեմբեր

1. Ամբիոնի վարիչների հաղորդումը լաբորատոր աշխատանքների ծրագրերում կատարված փոփոխությունների մասին:

2. «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցոլոգիական հարցումների արդյունքների քննարկում (նախորդ տարվա 2-րդ կիսամյակի արդյունքներ)

3. Ընթացիկ հարցեր:

Հոկտեմբեր

1. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահի հաշվետվությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Նոյեմբեր

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքների ընթացքի վերաբերյալ:
3. Ծրագրերի ղեկավարների հաղորդումը առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների մասին:
4. Մագիստրոսական թեզերի ընթացքի վերաբերյալ ամբիոնի վարիչների հաշվետվությունը:
5. Ընթացիկ հարցեր:

Դեկտեմբեր

1. Ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների քննարկում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը դասալսումների մասին(դասալսումների վերաբերյալ տվյալները պետք է ներկայացնել գրավոր):
3. Ընթացիկ հարցեր:

Փետրվար

1. Ամբիոնի վարիչների հաղորդումը քննաշրջանի ընթացքի և արդյունքների քննարկում:
2. Մագիստրոսական ծրագրերով ուսուցման վիճակի մասին ամբիոնների վարիչների հաղորդումների լսում:
3. Մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները:
4. «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցոլոգիական հարցումների արդյունքների քննարկում (1-ին կիսամյակի արդյունքների քննարկում)
5. Ընթացիկ հարցեր:

Մարտ

1. Ավարտական աշխատանքների ընթացքի մասին ամբիոնների վարիչների հաղորդումները:
2. Մագիստրոսական և բակալավրիական ուսումնական ծրագրերի վերանայում և հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Ապրիլ

1. Ուսումնաարտադրական պրակտիկաների արդյունքների քննարկում:
2. Ընթացիկ հարցեր:

Մայիս

1. «Քիմիա» գիտահետազոտական կենտրոնի ղեկավարի հաշվետվությունը 2025-2026 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը դասալսումների մասին(դասալսումների վերաբերյալ տվյալները պետք է ներկայացնել գրավոր):
3. Ընթացիկ հարցեր:

Հունիս Ա

1. Ավարտական աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:
2. Ուսումնական ծանրաբեռնվածությունների հաստատում:
3. Հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:
4. Ընթացիկ հարցեր:

Հունիս Բ

1. Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոի վարիչի հաշվետվության լսումը 2025-26 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
2. Օրգանական քիմիայի ամբիոի վարիչի հաշվետվության լսումը 2025-26 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:

3. Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոի վարիչի հաշվետվության լսումը 2025-26 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
4. Ընթացիկ հարցեր:

Քննարկված և հաստատված է քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի 2025թ . Օգոստոսի 29-ին կայացած նիստում՝ արձանագրություն թիվ 1:

-Նիստի նախագահ՝ Ա.Ս.Գալստյան,- անդրադառնանք օրակարգի 2-րդ հարցին. «Ամբիոնների վարիչների հաղորդումները նոր ուսումնական տարում լաբո-ռատորիաների պատրաստվածության վերաբերյալ»

Ա.Ի.Մարտիրյան – Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ: Այս տարի մեզ մոտ լաբորատորիաների վիճակը համեմատաբար լավ է: Բոլոր լաբորատորիաները վերանորոգված են և պատրաստ են ուսումնական տարվան: Մի քանի խնդիրներ կան, որոնք հեշտ վերացվող են:

Ն.Ա.Դուրգարյան- Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ: Մեզ մոտ վիճակը այլ է: **Լաբորատորիաները ամբողջովին պատրաստ չեն:**

Գ.Ս.Գրիգորյան - Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ: Մեզ մոտ վիճակը նորմալ է, և պատրաստ ենք դիմավորելու ուսանողներին:

Ա.Ս.Գալստյան – Հարգելի գործընկերներ, լաբորատորիաներում ուսանողները աշխատանքները պետք է կատարեն անհատական: Հարկավոր է մշակել մեթոդաբանություն: Բազմաբաղադրիչ համակարգը մեզ շատ հնարա-վորություններ և լծակներ է տալիս: Հետևաբար հնարավոր է լաբորատոր աշխատանքների մեջ ներառել ուսանողի ինքնուրույնության գնահատումը: Որևէ փորձի հավաքում, իրականացում, սինթեզ, լուծույթի պատրաստում և հաշվարկ: Այսպիսով ներառեք Ձեր պրակտիկայում ստուգիչ փորձերի քանակ, որը ցույց կտա ուսանողի ինքնուրույնությունը և մնացորդային հմտությունը առարկայի շրջանակներում:

Ա.Ս.Գալստյան – Հարգելի գործընկերներ՝ ընթացիկ հարցեր բաժնում ունենք մի քանի հարց

1. Բոլորդ ստացել եք ռեկտորի շրջաբերականը՝ կայքում մինչև սեպտեմբերի 9-ը տեղադրել առարկայի նկարագրիչները, դասագրքերը և գնահատումը: Խնդրում եմ հստակ կատարել հրահանգը: Ամբիոնի վարիչները պետք է լինեն հետևողական:

2. Անցած ուսումնական տարվա վերջում մենք որոշեցինք կազմել հանձնաժողով, որպեսզի հստակեցնենք ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի չափորոշիցները՝ խուսափելու համար աշխատանքների անհամեմատելիությունից: Այս խնդիրը լուծելու համար առաջարկում եմ կազմել հանձնաժողով, որտեղ կընդգրկվեն ծրագրի ղեկավարները, մեթոդխորհրդի նախագահը և ամբիոնի վարիչները: Առաջարկը ընդունվեց միաձայն քվեարկությամբ:

Որոշեցին ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի չափորոշիչների հստակեցման համար կազմել հանձանաժողով հետևյալ կազմով

Հանձնաժողովի նախագահ- մեթոդ խորհրդի նախագահ, պրոֆեսոր Կ.Ռ.Գրիգորյան

անդամներ՝ «Քիմիա» բակալավրիական ծրագրի ղեկավար Լ.Ս.Գաբրիելյան, «Քիմիա» մագիստրոսական ծրագրի ղեկավար Ն.Ա.Դուրգարյան, «Սննդի անվտանգություն» ծրագրերի ղեկավար Ա.Ի.Մարտիրյան և «Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի» ամբիոնի վարիչ Գ.Ս.Գրիգորյան: Հանձնաժողովը պետք է կատարված աշխատանքի տվյալները, չափորոշիչների վերաբերյալ, ներկայացնի հոկտեմբեր ամսվա գիտական խորհրդի նիստին, իսկ շտկված տարբերակը ներկայացնի նոյեմբերին, ըստ որի կձևակերպվեն ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը:

-Ա.Ս.Գալստյան- Ընթացիկ հարցերի վերջին հարցը անվանական կրթաթոշակների հարցն է: Գրասենյակը դիտարկել և քննարկել գերազանց

առաջադիմությամբ ուսանողների ցանկը՝ հաշվի է առնվել ուսանողների ՄՈԳ-ը 4 կիսամյակների համար։ Անվանական կրթաթոշակի հավակնորդներ են

1. Կիրակոսյան Արեն Արկադիի «Քիմիա» մասնագիտություն 3-րդ կուրս – արդյունարար ՄՈԳ -19,73

2.Հովհաննիսյան Զեմֆիրա Արտավազդի «Քիմիա» մասնագիտություն 3-րդ կուրս – արդյունարար ՄՈԳ -19,52

3. Երիցյան Էմիլյա Ալեքսանդրի «Սննդի անվտանգություն» մասնագիտություն 4-րդ կուրս –արդյունարար ՄՈԳ -18,97։

Որոշեցին - ա/ Նշանակել «Քիմիա» բաժնի բակալավրիատի 3-րդ կուրսի գերազանց առաջադիմությամբ ուսանող Արեն Արկադիի Կիրակոսյանին «Դավիթ և Նազելի Չարչյանների» անվան կրթաթոշակը։

բ/ Նշանակել «Քիմիա» բաժնի բակալավրիատի 3-րդ կուրսի գերազանց առաջադիմությամբ ուսանողուհի Զեմֆիրա Արտավազդի Հովհաննիսյանին «Ստեփան Ղամբարյանի» անվան կրթաթոշակը։

գ/ Շարունակել «Սննդի անվտանգություն» բաժնի բակալավրիատի 4-րդ կուրսի գերազանց առաջադիմությամբ ուսանողուհի Էմիլիա Ալեքսանդրի Երիցյանին «Աիդա Ավետիսյանի» անվան կրթաթոշակը։

Նիստի նախագահ

Դոցենտ Ա.Ս.Գալստյան

Նիստի քարտուղար

Դոցենտ Մ.Ա.Սամվելյան